ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№_1265-Ա_____ « 01 » ապրիլի 2024թ.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 3-րդ մասի 4-րդ կետով, 112-րդ հոդվածով, 130-րդ հոդվածի 1-ին մասով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ ենթակետով, «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 8.1-ին կետով և հիմք ընդունելով Հովհաննես Մանուկյանի անձնական դիմումը՝

1.Հովհաննես Մանուկյանին՝ 2024 թվականի ապրիլի 1-ից ազատել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից՝ աշխատանքային վերջին օր համարելով 2024 թվականի ապրիլի 1-ը:

2.«Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն ընկերության շահագործման բաժնի պետ Խաչիկ Մալոյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ